ԶԵԿՈՒՅՑ

Երևանի «Զատիկ» երեխաների
աջակցության կենտրոն

03.05.2023 թ.

այցի վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն 1

Այցի վերաբերյալ 2

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 3

Դիտորդական խմբի մուտքը կենտրոն 3

Երեխաների մուտքը Կենտրոն 4

Գերբնակեցում 5

Երեխաների կրթության և ժամանցի իրավունքը 6

Երեխաների առողջության իրավունքը 8

Բռնությունից պաշտպանությունը 9

Աշխատանքային մթնոլորտը 11

Հաղորդակցությունը 13

Սննդի կազմակերպումը 13

Առաջարկություններ 15

ԱՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիտորդական խմբի անդամներ Լիլիթ Գևորգյանը («Առողջապահության քաղաքականության և նորարարության կենտրոն» ՀԿ), Կարինե Դավթյանը («Կանանց իրավունքների տուն» ՀԿ) և Մարիետա Թեմուրյանը («Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ) 2023 թ. մայիսի 3-ին չհայտարարված այց են կատարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն ՊՈԱԿ (այսուհետ՝ Կենտրոն):

Այցի նպատակն է եղել գնահատել Դիտորդական խմբի՝ 2023 թ. մարտի 29-ի այցի ժամանակ արձանագրված ու զեկույցում ներկայացված խնդիրների լուծման ընթացքը:

Հորդորում ենք ներկայացված տեղեկությունները և առաջարկները մեկնաբանել բացառապես երեխայի լավագույն շահի լույսի ներքո: Բացառել աշխատողների և երեխաների նկատմամբ՝ տեղեկությունները Դիտորդական խմբին փոխանցելու հանգամանքով պայմանավորված ճնշումները:

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիտորդական խմբի մուտքը կենտրոն

Պահնորդը խոչընդոտել է Դիտորդական խմբի անդամների մուտքը շենք՝ տնօրենից թույլտվություն ստանալու անհրաժեշտության պատճառաբանությամբ: Պահնորդը 7-րդ հերթափոխն էր աշխատում և տեղյակ չէր Դիտորդական խմբի գործունեության և իրավասությունների մասին:

Կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը հայտնել է կրկնակի այցի առիթով իր զարմանքը և իր համոզմունքը՝ Կենտրոնի վրա «ֆիքսվելու» վերաբերյալ:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկած միջոցներ և մեկնաբանություններ

Դիտորդական խմբի մուտքը կենտրոնի տարածք վերահսկելիս Պահնորդ աշխատակիցը ղեկավարվել է 19.12.2022 թվականին կնքված Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ի (այսուհետ Կենտրոն) կարիքների համար անվտանգության ապահովման ծառայությունների մատակարարման վերաբերյալ թիվ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀՁԲ-23/2-1 Պայմանագրով սահմանված իր պարտականություններով: Մասնավորապես՝ նշված Պայմանագրի համաձայն Պահնորդը պարտավոր է ճշտել կողմնակի անձանց ինքնությունը, ինչը և կատարվել է:

Երեխաների մուտքը Կենտրոն

Դիտորդական խումբը մարտի 29-ի այցի ընթացքում արձանագրել էր, որ երեխաների՝ Կենտրոն ուղղորդումը համակարգված չէ և որ երեխաները Կենտրոն մուտք գործելիս չեն ստանում բավարար և իրենց հասկանալի լեզվով տեղեկություններ:

Ի լրումն մարտի 29-ի այցի վերաբերյալ զեկույցում արձանագրված խնդրի՝ որոշ աշխատողներ ևս հայտնել են, որ Կենտրոն ուղղորդումը սխալ է իրականացվում, ինչն էլ հետագա խնդիրների պատճառ է դառնում: Մասնավորապես՝ երեխաներին չի ներկայացվում, թե իրենք ուր են գնում, ինչ պետք է սպասել (օրինակ՝ ասվում է, որ «ճամբար է գալիս» և այլն):

Խնդրահարույց է անորոշությունը՝ կապված Կենտրոնում գտնվելու ժամկետների հետ: Երեխաները տեղեկացվում են, որ Կենտրոնում ապրելու են վեց ամիս, սակայն այդ ժամկետը երկարում է՝ բացասաբար անդրադառնալով նրանց հոգեվիճակի վրա:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկած միջոցներ և մեկնաբանություններ

Նոր երեխաներին Կենտրոն ուղղորդող կառույցները երբեմն ոչ լիարժեք տեղեկություն են տրամադրում Կենտրոնի մասին: Սակայն Կենտրոնի կողմից տարվող ճիշտ և գրագետ աշխատանքների արդյունքում երեխան ստանում է Կենտրոնի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն: Կենտրոնում մնալու վեցամսյա ժամկետի երկարաձգվելը պայմանավորված է համայնքի դիրքորոշմամբ և քննական վարույթում գտնվող գործերի առկայությամբ:

Նշենք նաև, որ ՀՀ ԱՍՀՆ կողմից պարբերաբար իրականացվում են իրազեկման հանդիպումներ, քննարկումներ պատկան մարմինների

համապատասխան ներկայացուցիչների հետ՝ երեխայակենտրոն մոտեցում ցուցաբերելու վերաբերյալ:

Փոփոխություններն էականորեն նկատելի կլինեն օրենսդրական բարեփոխումների ընդունումից հետո, որը հնարավորություն կտա երեխայի պաշտպանության գործընթացում համալիր մասնագիտական մոտեցում ցուցաբերելու. իսկ մինչ այդ կիրառվում են միջանկյալ միջոցներ:

Գերբնակեցում

Երեխաների տարիքային տարբերությունը, վարքային տարբեր դրսևորումներն ու առողջական վիճակը և ոչ բավարար տարածքն անհնար են դարձնում արժանապատիվ կեցության ապահովումը:

Արձանագրվել է ննջասենյակներում անձնական տարածքի անհամապատասխանություն սահմանված չափանիշներին, անհատական դարակների անբավարար քանակ, ցածր ջերմաստիճանի խնդիրները: Վերջինիս հարցում անհրաժեշտ է ցուցաբերել ճկուն մոտեցում՝ հնարավորություն տալով Կենտրոնին կիրառել լոկալ (ըստ սենյակի) լուծումներ, երբ երեխաները մրսում են: Այս, ինչպես նաև մահճակալների անհարմարության խնդիրները բարձրաձայնել են նաև երեխաները:

Խնդրահարույց է շարունակում մնալ համակեցության կանոնների պահպանումը միաժամանակ մեծ թվով երեխաների խնամքի կազմակերպման դեպքում: Մասնավորապես՝ ցերեկային քնի կազմակերպումը փոքրերի դեպքում, երբ ավելի բարձր տարիքի երեխաներն արթուն են և կարող են աղմկել:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկած միջոցներ և մեկնաբանություններ

Կենտրոնում՝ հատկապես ննջասենյակներում, ապահովվում է համապատասխան ջերմաստիճանը:

Կենտրոնն ունի ննջասենյակներում երեխաներին ճիշտ բաշխելու խնդիր: Մասնավորապես քննարկվում է կենտրոնում երրորդ խմբի ձևավորման անհրաժեշտություն՝ առաջնորդվելով տարիքային առանձնահատկություններով:

Նշենք, որ ՊՈԱԿ-ներում գույքային հագեցվածության ապահովմանն ուղղված աշխատանքները ընթացքի մեջ են:

Երեխաների կրթության և ժամանցի իրավունքը

Դիտորդական խմբի կողմից Կենտրոն մարտի 29-ի այցի վերաբերյալ զեկույցում արձանագրվել էր դպրոցներում երեխաների արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտումը:

Կենտրոն մայիսի 3-ի այցի ընթացքում Դիտորդական խումբը տեղեկացվել է դպրոցում երեխաներին պիտակավորելու, երեխաների՝ դպրոցում դժվար ադապտացվելու և Կենտրոն-դպրոց հարաբերությունների՝ ոչ արդյունավետ համագործակցության մասին:

Դիտորդական խմբին հատկապես մտահոգել է հրապարակված տեղեկությունը[1], որ Երևանի N3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցած քննարկմանը «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնից որևէ ներկայացուցիչ չի մասնակցել:

[1] https://www.facebook.com/tmak.h3/posts/pfbid02hnxh7ESiTqJu3uiFbYsjLVkYJeRwhgonRP5YgZi4WVyh9WJwmbuTXzM6CuYpiSirl

Դիտորդական Խմբին տրվել է հակասական տեղեկություն երեխաների տեղաշարժի վերաբերյալ: Մասնավորապես՝ տնօրենը նշել է, որ երեկոյան ժամերին արգելվում է դուրս գալ մի քանի տղայի, որոնք կարող են փախուստի դիմել, մինչդեռ զրույցների ընթացքում երեխաները նշել են, որ թույլատրվում է դուրս գալ միայն այն տղաներին, որոնց, ըստ տնօրենի, արգելվում է: Միևնույն ժամանակ երեխաները, օրինակ, առանց ուղեկցության են գնում դպրոց: Այսինքն՝ երեխաները, մի կողմից՝ առանց ուղեկցության կարողանում են դուրս գալ Կենտրոնի տարածքից, մյուս կողմից՝ սահմանափակվում է նրանց տեղաշարժը Կենտրոնի տարածքում:

Երեխաները Դիտորդական Խմբի անդամների հետ զրույցներում սպորտային խմբակներ (ֆուտբոլի, շաշկիի կամ շախմատի) հաճախելու ցանկություն են հայտնել:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկած միջոցներ և մեկնաբանություններ

Կրթական հաստատություններում երեխայի բնականոն ներառումն ապահովելու նպատակով իրականացվում են երկու հաստատությունների միջև քննարկումներ, առկա է սերտ կապ: Կայուն երկխոսության ստեղծման, բուլլինգի կանխարգելման նպատակով ներկայումս ընթանում են դասընթացներ՝ ներառելով թե ուսուցիչների, թե խնամքի հաստատությունների:

Երբեմն երեխաների՝ նոր դպրոց հաճախելու ընթացքում, առաջանում է դեզադապտացիա, սակայն ժամանակի ընթացքում և Կենտրոնի բազմամասնագիտական թիմի ու դպրոցի մանկավարժների համատեղ աշխատանքի արդյունքում հիմնականում գրանցվում է դրական տեղաշարժ:

Երեխաները Կենտրոնի տարածքում ունեն ազատ տեղաշարժ, Կենտրոնից դուրս ունեն որոշակի սահմանափակում՝ ելնելով երեխաների անվտանգության նկատառումներից:

Երեխաների առողջության իրավունքը

Դիտորդական խումբն արձանագրել էր, որ Կենտրոնում խախտվում է խնամք ստացող դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման իրավունքը: Նրանք չեն ստանում մեկուսի և բարյացակամ խորհրդատվություն սեռական հասունացման, սեռական առողջության հարցերի վերաբերյալ:

Խնդիրն արձանագրվել է նաև մայիսի 3-ի այցի ընթացքում: Աշխատակիցը թեև տեղեկացրել է, որ աղջիկների հետ պարբերաբար խոսում են սեռական և վերարտադրողական առողջության հարցերից, միևնույն ժամանակ նշել է՝ «Դեռահասների հետ, եթե նման թեմաներից խոսես, միտքը էդտեղ կգնա, ավելի լավ է չխոսել: Ավելի լավ է աղջիկներին սովորեցնել համեստություն, քան պաշտպանիչ միջոցների մասին»:

Այս այցի ընթացքում ևս որոշ երեխաներ բարձրացրել են հիգիենայի պարագաների սղության և ոչ պատշաճ որակի խնդիրը: Մասնավորապես որոշ աղջիկներ տեղեկացրել են, որ օրական մեկ միջադիր է տրամադրվում: Երեխաներից շատերը, ինչպես նախորդ այցի ընթացքում, այս այցին ևս դժգոհել են շամպունի որակից: Երեխաներից որոշները նշել են, որ հիմնականում օգտագործում են ընտանիքի անդամների բերած հիգիենայի պարագաները:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկած միջոցներ և մեկնաբանություններ

Սեռական դաստիրակությունը կրում է անհատական բնույթ, ինչպես նաև կախված երեխայի տարիքային առանձնահատկություններից: Երեխաների հետ տարվում են անհատական և խմբային աշխատանքներ:

Սեռական դաստիրակության թեմաներով պարբերաբար զրույցներ են անցկացվում բազմամասնագիտական թիմի կողմից:

Հիգիենային պարագաների ճիշտ բաշխման վերաբերյալ տարվել են աշխատանքներ, դրանց տրամադրման մեխանիզմները վերանայվել են, ինչի արդյունքում նշված խնդիրները վերացվել են:

Բռնությունից պաշտպանությունը

Մարտի 29-ին Կենտրոն այցի վերաբերյալ զեկույցում Դիտորդական խումբն արձանագրել էր, որ երեխաներին շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի բոլոր ձևերից պաշտպանելու ուղղությամբ քայլերը համակարգված և բավարար չեն: Այցի ընթացքում տեղեկություններ էին ստացվել ֆիզիկական և սեռական բռնության վերաբերյալ, տղաների խմբում Դիտորդական խմբի անդամները նկատել էին վնասվածքներ և կապտուկներ ունեցող երեխաների:

Մայիսի 3-ի այցի ընթացքում Դիտորդական խմբի անդամները երեխաների հետ զրույցներից տեղեկացել են, որ նախորդ այցից հետո որոշակի դրական փոփոխություն կա միմյանց և աշխատակիցների հետ հաղորդակցման առումով: Միաժամանակ, խնդիրը հետևողական և համակարգային լուծման կարիք ունի: Մասնավորապես՝ նկատելի էր երեխաների կողմից աշխատակիցների նկատմամբ լարվածություն:

Բացի դրանից՝ երեխաները կրկին հայտնել են այլ երեխաների կողմից վատ վերաբերմունքի, ներառյալ ֆիզիկական բռնության մասին: Որպես օրինակ

մեծ տղաները փոքրերին կարող են «խփել», երբ վերջիններս աղմկում և խանգարում են նրանց քունը:

Ըստ երեխաների՝ իրենց հարցրել են, թե ինչ են ասել Դիտորդական խմբի անդամներին, հորդորել լավը մատնանշել և միևնույն ժամանակ սպառնացել, թե «ձեր հալը կտեսնեք»: Ըստ երեխաներից մեկի՝ աշխատակիցն ասել է՝ «էդ ձեր դիտորդներն եկան, ի՞նչ փոխեցին»՝ նկատի ունենալով, որ նույնիսկ Դիտորդական խմբի այցը որևէ բան չի փոխել: Երեխաները նշում են, «սաղ իրանց ձեռն ա»՝ նկատի ունենալով աշխատակիցներին և ավելացնում, որ իրենց սպառնում են, օրինակ, Գավառի մանկատուն տեղափոխմամբ: Երեխաները դժգոհում են նաև, որ «երեսով են տալիս, եթե ասենք մի կոնֆետ են տալիս»:

Երեխաներից մեկը հայտնել է նաև ոստիկանների կողմից վատ վերաբերմունքի, այդ թվում՝ ֆիզիկական բռնության մասին՝ առանձնացնելով հատկապես ոստիկաններից մեկին: Ըստ նրա՝ ոստիկաններից մեկն ասել է՝ «ում ուզում եք, բողոքեք»: Ըստ երեխաներից մեկի՝ միայն մի դայակ է ոստիկաններին արգելել տղաներին հարվածել, որը սակայն հիմա չի աշխատում:

Դիտորդական խմբի անդամներն այցի ընթացքում արձանագրել են կապտուկով երկու երեխայի: Այս երեխաներից մեկը նշել է, որ ընկնել է: Փաստացի, տեղեկատվությունը հակասական և մտահոգիչ էր՝ հաշվի առնելով նաև նրանցից մեկի՝ ավելի բարձր տարիքով տղայի հետ շփման ընթացքում ակնհայտ վախեցած պահվածքը, ինչպես նաև տղաներից մեկի՝ սենյակը փոխելու խնդրանքը, որը երեխաների միջև վեճի պատճառով էր:

Բռնությունների գրանցման մատյան, թեև պարտադիր լինելուն, Կենտրոնում չէր վարվում:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկած միջոցներ և մեկնաբանություններ

Դիտորդական խմբի այցերից հետո երեխաների հետ առանձին, ինչպես նաև խմբային ուղղորդող հորդորներ տեղի չեն ունեցել:

Կենտրոն մուտք գործած ցանկացած իրավասու մարմնի ներկայացուցիչ երեխաների նկատմամբ դրսևորում է առավելագույնս նրբանկատ վերաբերմունք՝ հատկապես ոստիկանության աշխատակիցները:

Տղաների ննջասենյակում երբեմն լինում են անախորժություններ, որոնք, անգամ առանց մասնագետների միջամտության հարթվում են:

Դիտորդական խմբի այցի ընթացքում կապտուկներով երեխաներ չեն եղել:

Կենտրոնում սահմանված կարգով բացվել և գործողության մեջ է դրվել բռնությունների գրանցման համապատասխան մատյան:

Աշխատանքային մթնոլորտը

Մարտի 29-ի այցի վերաբերյալ զեկույցում Դիտորդական խումբն արձանագրել էր, որ աշխատանքային մթնոլորտը Կենտրոնում լարված է, ինչը բացասական ազդեցություն է ունենում երեխաների խնամքի կազմակերպման վրա: Տնօրենն իր խոսքում նշել էր, որ աշխատակազմում փոփոխություններ չի արել, «ոչ մեկին չի հանել, իր հետ մարդ չի բերել»:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկության համաձայն[2]՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 1-ը 10 աշխատակցի պայմանագիր է լուծվել: Աշխատակիցներից մեկի

[2] https://docs.google.com/document/d/1V-iXZ9y_UDHAg83fGeCXkkmLVaQsMLs_/

(հաստիքը՝ դայակ) աշխատանքն սկսելու ամսաթիվը 2023 թ. ապրիլի 1-ն է, իսկ աշխատանքային պայմանագրի լուծման ամսաթիվը ապրիլի 3-ը:

Պայմանագրերից վեցը լուծվել է Դիտորդական խմբի՝ մարտի 29-ի այցից հետո՝ մարտի 31-ից ապրիլի 17-ը:

Հաշվի առնելով նախորդ այցի ընթացքում արձանագրված աշխատանքային լարված մթնոլորտը՝ մտահոգիչ է 17 օրում նման թվով աշխատանքային պայմանագրերի լուծումը:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկած միջոցներ և մեկնաբանություններ

Կենտրոնում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ:

Աշխատակազմը համախմբված է ու կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ՝ թեյախմություններ, հավաքույթներ:

Կենտրոնի վարչակազմի փոփոխությամբ պայմանավորված զարկ է տրվել մի շարք բարեփոխումների իրականացմանը, որոնք առաջին հերթին հետապնդում են երեխաների լավագույն շահերը ապահովելու նպատակ:

Հարկ է նշել, որ բոլոր դեպքերում աշխատանքային պայմանագրերը լուծվել են աշխատողների նախաձեռնությամբ, իսկ դրանց պատճառները բազմազան են՝ ավելի բարձր վարձատրվող աշխատանքի անցնելու, աշխատանքային խանրաբեռնվածությանը չդիմանալու հանգամանքներ, առողջական խնդիրներ: Քննարկվող հաստիքները համալրված են:

ՀՀ ԱՍՀՆ-ն ևս կազմակերպում է այցեր, հեռավար քննարկումներ՝ հաստատության ներսում ներդաշնակեցման համար:

Հաղորդակցությունը

Մարտի 29-ի այցի վերաբերյալ զեկույցում արձանագրվել էր, որ երեխաների՝ այլ անձանց, այդ թվում՝ ծնողների հետ հաղորդակցությունը սահմանափակված է: Հեռախոսների տնօրինման, դրանց օգտագործման սահմանափակման, որպես գույք պահպանելու հարցը կարգավորված չէ և թողնված է անհատների որոշումներին: Մասնավորապես տղաների հեռախոսները հավաքվել էին տնօրենի կողմից: Դիտորդական խմբի՝ մարտի 29-ի այցից հետո երեխաներին վերադարձվել են իրենց հեռախոսները, սակայն ոչ բոլորին են վերադարձվել SIM քարտերը:

Նախորդ այցի ընթացքում պարզվել էր, որ երեխաների կապը ծնողների հետ ապահովվում է սոցիալական աշխատողների մոտ գտնվող հեռախոսի միջոցով, և նրանք էլ ներկա են լինում հեռախոսազրույցին: Մայիսի 3-ի այցի ընթացքում նույնպես երեխաները նշել են հեռախոսազանգերի ընթացքում սոցիալական աշխատողի ներկայության մասին: Ըստ որոշ երեխաների՝ զանգի հնարավորություն ունեն օրական մեկ անգամ:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկած միջոցներ և մեկնաբանություններ

Երեխաների կապը ծնողների հետ իրականացվում է քաղաքային և բջջային հեռախոսների միջոցով: Հաղորդակցումը չի սահմանափակվում:

Սննդի կազմակերպումը

Խնդրահարույց է սննդի կազմակերպման ընթացակարգը: Որոշ երեխաներ և աշխատակիցներ նշել են, որ հրահանգված է նախաճաշի ժամը բաց թողած երեխաներին սնունդ չտրամադրել: Այսինքն՝ նրանք սոված են մնում մինչև ժամը 14:00-15:00-ն:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկած միջոցներ և մեկնաբանություններ

Սննդի կազմակերպման ընթացքն ունի համապատասխան ռեժիմ: Որոշ կենցաղային հարցերի պատճառով՝ դպրոցից տարբեր ժամերի վերադառնալը, երբեմն ռեժիմը խախտվում է, սակայն դա խոչնդոտ չի հանդիսանում, և յուրաքանչյուր երեխա պարտադիր ստանում է օրվա բոլոր հատվածների իր հասանելիք սնունդը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիտորդական խումբն արձանագրում է, որ նախորդ հրատապ զեկույցում տեղ գտած առաջարկությունները դեռևս արդի են: Ի թիվս նախորդ առաջարկների, հաշվի առնելով մայիսի 3-ի այցի արդյունքները, Դիտորդական խումբն առաջարկում է՝

- ապահովել երեխաների լիարժեք իրազեկվածությունը Կենտրոնի գործունեության, դրա բնույթի և իրենց իրավունքների վերաբերյալ ինչպես նախքան Կենտրոն գալը, այնպես էլ Կենտրոնում գտնվելիս, այդ թվում՝ տեղեկացնելով Կենտրոնում գտնվելու ժամկետների հնարավոր փոփոխության մասին

- համապատասխանեցնել Կենտրոնի ֆիզիկական պայմաններն օրենսդրության պահանջներին՝ առանցքում ունենալով երեխաների բարեկեցությունը, այդ թվում՝ անձնական տարածքի ապահովումը, անհատական պահարանների տրամադրումը

- ապահովել Կենտրոնի ներկայացուցիչների ներգրավվածությունը երեխաների կրթությանը խոչընդոտող բոլոր գործոնների վերացմանը

- ապահովել երեխաների մոտ կապտուկների և վնասվածքների արձանագրումը

- ապահովել երեխաների՝ իրենց հասանելիք սննդի ստացումը նաև նախաճաշին հատկացված ժամը բաց թողնելու դեպքում